ԷԴԳԱՐ ՆԱՎՈՅԱՆ
EDGAR NAVOYAN

«ԷՅԶԵՆՀԱՈՒԵՐԻ ԴՈԿՏՐԻՆԱ» ՈՐՊԵՍ «ՄԱՐՇԱԼԻ ՊԼԱՆԻ» ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, ԱՄՆ-ը կապիտալիստական աշխարհում իր գերակշռող ազդեցիկ դիրքն ապահովելու, ավերված Եվրոպայի տնտեսությունը վերականգնելու, տարածաշրջանում հասարակական կյանքն ուղղորդելու և կոմունիստական գաղափարախոսության տարածման գործընթացը կանխարգելելու համար 1947 թ. հրապարակեց «Եվրոպայի տնտեսության վերականգնման ծրագիր», որ հայտնի է նաև «Մարշալի պլան» անունով: Այս ծրագրի շրջանակներում 1948-1951 թթ. եվրոպական 17 պետությունների[1] տրամադրվեց 12,4 մլրդ դոլարի օգնություն:

Միացյալ Նահանգները «Մարշալի պլանի» միջոցով տնտեսական գրոհային քաղաքականություն ձեռնարկեց Արևմտյան Եվրոպայի երկրների վրա: Ապրանքների և դոլարի արտահանման (1944 թ. Բրեթոն Վուդի վեհաժողը տալիս էր այդ հնարավորությունը, քանի որ ամերիկյան դոլարը ճանաչվել էր միակ արտարժույթ, որն ուներ ոսկու փոխարժեք), ինչպես նաև անհատույց օգնության տրամադրման միջոցով ԱՄՆ-ը, փաստորեն, սահմանեց հսկողություն այդ պետությունների տնտեսա-ֆինանսական համակարգի նկատմամբ և ճանապարհ հարթեց «Ամերիկյան աշխարհակարգի» համար[2]:

«Մարշալի պլանի» ձեռքբերումներն այնքան շահեկան էին ԱՄՆ-ի համար, որ 1951 թ. ծրագրի «պաշտոնական ավարտից» հետո, նա չէր կարող բավարարվել այդքանով և շուտով պլանի սկզբունքների հիմքի վրա 1957 թ. առաջ քաշեց նրա օրգանական շարունակությունը «Էյզենհաուերի հայեցակարգը»:

«Սառը պատերազմի» պայմաններում ԱՄՆ նախագահ Դուայտ Էյզենհաուերի կառավարությունը շարունակում էր ԽՍՀՄ-ի «զսպման» քաղաքականությունը, որի արտահայտությունն էր ամերիկյան զինված միջամտությունը Գվատեմալայում [1] և Լիբանանում [2]: Այս գործելակերպը ԱՄՆ-ը արդարացնում էր

---

[1] Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա, Նիդերլանդներ, Արևմտյան Գերմանիա, Ավստրիա, Յունաստան, Թուրքիա և այլն:

[2] «Ամերիկյան աշխարհակարգի» մասին քաղաքական գաղափարախոսություններն սկիզբ են առել դեռևս ԱՄՆ-ի կազմավորման ժամանակաշրջանից և շարունակվում են մինչ այժմ, տես, օրինակ, «Մոնրոյի դոկտրինան», «բաց դռների և ազատ հնարավորությունների հայեցակարգը», «Դալլեսի ծրագիրը», Զ. Բժեզինսկու աշխատությունները և այլն:

թուլացած կրտսեր դաշնակիցների մասնավորապես Անգլիայի և Ֆրանսիայի դիրքերի զավթմանը աշխարհի տարբեր մասերում: Այդ է վկայում Սուեզի պատերազմից հետո [3, էջ] 1957 թ. հունվարի 5-ին ԱՄՆ-ը նախագահի կողմից հրապարակված «էյզենհաուերի դոկտրինան»: ԱՄՆ-ը կառավարությունը օգտվելով Մերձավոր Արևելքում Անգլիայի և Ֆրանսիայի պարտությունից ու արտաքսումից, հայտարարեց, որ ինքը կոչված է լցնելու ստեղծված «վակուումը», զբաղեցնելու այն դիրքերը, որ կորցրել են Անգլիան ու Ֆրանսիան Մերձավոր Արևելքում: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության այս նոր ծրագիրը ստացավ «էյզենհաուերի դոկտրինա» անունը [4, էջ 784-785]: 1957 թ. մարտի 9-ին կոնգրեսն ընդունեց օրենք, որը Մերձավոր Արևեքի երկրների անկախությունը պաշտպանելու պատրվակով նախագահին իրավունք էր տալիս օգտագործել «զինված ուժեր՝ օգնություն ցույց տալու ցանկացած երկրի կամ երկրների խմբի, ով դրա կարիքը կունենա՝ ընդդեմ որևէ երկրի զինված հարձակման, որը վերահսկվում է միջազգային կոմունիզմի կողմից» և որ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներին հարկավոր են լրացուցիչ ուժեր իրեց «անկախությունը» պահելու համար [5, էջ 258-259]: էյզենհաուերի դոկտրինայում «կոմունիստական սպառնալիք» արտահայտության տակ պետք է հասկանալ ժողովրդական ազգային-ազատագրական պայքարը՝ ուղղված օտարերկրյա գաղութատիրության և տեղական բռնակալական վարչակարգի դեմ: Այս հայեցակարգը փլուզվող դասական գաղութատիրական համակարգը գործնականում նոր գաղութատիրությամբ փոխարինելու ծրագիր էր: «Անգլիան ու Ֆրանսիան այլևս անընդունակ էին պահելու իրեց Արևելյան գաղութները, ուստի Մերձավոր ու Միջին Արևելքում նրանց գաղութային ժառանգությունը գործնականում լուծվեց օգուտ ԱՄՆ-ի» [6, էջ 232]: Հին «դասական» գաղութատիրությանը փոխարինելու եկավ էվոլուցիայի ենթարկված նոր գաղութատիրությունը, որը շարունակվում է նաև այժմ՝ միջազգային վարկավորումների, օգնությունների տեսքով, քաղաքական և տնտեսական տեսանելի ու անտեսանելի դրսևորումներով, «ամերիկյան դեմոկրատիայի արտահանման» տեսքով և այլն:

Նախկին գաղութատիրական երկրները տարբեր միջազգային կազմակերպությունների միջոցով (օրինակ՝ Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը և այլն) քաղաքական ու տնտեսական ճնշում գործադրելով՝ զարգացող երկրներին ստիպում էին զիջումների գնալ իրավական, վարչատնտեսական բնագավառում և արմատական փոփոխություններ մտցնել այդ երկրների օրենքներում՝ ամրապնդելով իրենց տնտեսական գերակշիռ դիրքերը:

«Էյզենհաուերի դոկտրինայի» մշակման գործում կարևոր տեղ է հատկացվել նավթային գործոնին: Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերություններում բացառիկ տեղ է զբաղեցնում նավթը՝ էներգիայի հիմնական աղբյուրը և համաշխարհային առևտրի մեջ ամենահիմնական ապրանքը: Արաբական երկրներում[3] կենտրոնացված է համաշխարհային պաշարների գրեթե կեսը մոտ 50 մլրդ. տոննա նավթ [7, էջ 288], Իրանում համաշխարհային նավթի 10%-ը (գազի՝ 13%-ը) [8, էջ 164] և այլն: XX դարի ընթացքում այն բոլորը, ինչ ուղղակի կամ անուղղակի կապված է արաբական և ընդհանրապես նավթ արդյունահանող երկրների հետ, վերածվեց խնդիրների ու հակասությունների բարդ համակարգի ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային առանձին երկրների մակարդակով [7, էջ 288]: Լավ հասկանալով նավթի արժեքը դեռևս XX դարի սկզբին բրիտանացի ծովակալ Ջոն Ֆիշերը ասել է. «Ով տիրում է նավթին, նա կառավարում է աշխարհը» [9] [4]:

Մերձավորարևելյան նավթը ԱՄՆ-ի համար ուներ ռազմավարական նշանակություն: Նրա հաշվին էր ապահովվում ԱՄՆ-ի դաշնակից ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական երկրների էներգոռեսուրսները և գրեթե ամբողջ ՆԱՏՕ-ի կառույցը եվրոպայում: Բացի այդ մերձավորարևելյան նավթով էր մատակարարվում ԱՄՆ-ի Միջերկրական ծովի, Հնդկական օվկիանոսի նավատորմը և Հարավային կիսագնդում տեղակայված ամերիկյան ռազմական հենակետերը [10, էջ 655-674, 8, էջ 145-147, 13, էջ, 57-86, 7, 288-296, 14] (1950-ական թթ. Իրանում, իսկ հետագայում անկախություն ձեռքբերած արաբական մի շարք՝ երկրներում ծավալվել էին նավթի և ազգային այլ հարստությունների ազգայնացման շարժում, ինչը չէր կարող չահանգստացնել ԱՄՆ-ին, Անգլիային ու Ֆրանսիային: Վերջիններս վճռական քայլերի դիմեցին ճնշելու այդ գործողությունները [15]):

---

[3] Նավթի պաշարների չափերի հերթականությունը Սաուդյան Արաբիա, Իրաք, Քուվեյթ, Լիբիա, Միացյալ Արաբական էմիրություններ, Ալժիր, Եգիպտոս, Կատար, Օման, Սիրիա, Թունիս, Բահրեյն:

[4] Ի. Ստալինը այսպես է ձևակերպել նավթի կարևորությունը համաշխարհային քաղաքականության մեջ. «Նավթի հարցը կենսական հարց է, քանի որ նա, ով շատ կունենա նավթ, նա էլ կթելադրի ապագա պատերազմում, նրանից կախված կլինի համաշխարհային արդյունաբերությունը և առևտուրը: Այն բանից հետո, երբ զարգացած երկրների նավերը անցում կատարեցին [ներքին այրման, *ը.մ.*] շարժիչների, նավթը դարձավ աշխարհի տերությունների նյարդային պայքարի բաղկացուցիչը, ինչպես խաղաղության, այնպես էլ պատերազմի ժամանակ» (Сталин И. В., XIV съезд ВКП(б), с. 277):

Պատճառներից մեկը նաև դա էր, որ ժամանակի միջազգային հարաբերությունների գործընթացը հաշվի առնելով առաջ քաշվեց «էյզենհաուերի դոկտրինան»:

Ներկայումս ամերիկյան ռազմական հենակետերը (բազաներ) գլխավորապես տեղակայված են նավթի հանքերով հարուստ տարածաշրջաններում կամ դրանց հարող ու սահմանակից տարածքներում, կամ էլ գտնվում են այնպիսի ռազմավարական նշանակություն ունեցող վայրերում, որտեղից կարել է անմիջական հսկողություն սահմանել ԱՄՆ-ին մրցակից պետությունների վրա: Այդպիսի օրինակներից է Աֆղանստանը: Գտնվելով այնտեղ Միացյալ Նահանգները կարողանում են վերահսկել այնպիսի պետությունների արտաքին քաղաքականությունը, ինչպիսիք են Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանը, Իրանը: Այս երկրներն ունեն լուրջ էներգետիկ պաշարներ և հավակնում են դառնալու, եթե ոչ ԱՄՆ-ին հակակշիռ աշխարհաքաղաքական բևեռը, ապա տարածաշրջանային գերտերություն:

Կենսական կարևորություն ունեցող տարածքներից մեկն էլ Պարսից ծոցի տարածաշրջանն է: Այստեղ կենտրոնացված է համաշխարհային նավթի պաշարների 50%-ը: ԱՄՆ-ի ռազմական հենակայանները գտնվում են Սաուդյան Արաբիայում, Քուվեյթում, Բահրեյնում, Կատարում, Ամանում, Արաբական Միացյալ էմիրություններում, որին պետք է ավելացնել նաև ամերիկյան ռազմածովային հզոր նավատորմը:

1950-ական թթ. ԱՄՆ-ը վերահսկողության ենթարկելով Մերձավոր Արևելքի նավթային պաշարները՝ սկսեց քաղել բացառիկ քաղաքական և տնտեսական օգուտներ՝ ճանապարհ հարթելով դոլարային դիվանագիտության ու աշխարհի միաբևեռացման համար (1950թ. մերձավորարևելյան նավթային հանույթում ամերիկյան կապիտալի բաժինը կազմում էր մոտ 40%, ապա 1955թ. 60% [7, էջ 29]): «Պրավդա» թերթը գրում է. «էյզենհաուերի դոկտրինայով» ԱՄՆ-ը խոստանում էր Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներին 1958 և 1959 թթ բյուջետային տարիների համար 200 մլն. դոլարի եկամուտ, այն դեպքում, երբ միայն 1955թ. ընթացքում ամերիկյան և անգլիական նավթային մոնոպոլիստները Մերձավոր Արևելքի նավթհանքերից ստացել են 150 մլն. տոննա նավթ 1900 մլն. դոլար մաքուր եկամուտով: Գործնականում այդպիսի տեսք ուներ ամերիկյան «բարեգործությունը» [16]:

Հատկանշական է, որ նախագահ Դ. էյզենհաուերը իր նախորդի նման նույնպես համաշխարհային տիրապետության հասնելու ամերիկյան հավակնությունների համոզված կողմնակից էր: 1952թ. հանդես գալով Կոլումբիայի համալսա-

ռանի ուսանողների առջև. նա ասաց գրեթե նույն արտահայտությունը, ինչ ժամանակին արել է Հ. Տրումենը. «Միացյալ Նահանգների վրա դրված է աշխարհը ղեկավարելու ծանր, բայց պատվավոր առաքելությունը» [6, էջ 194] (այդպիսի արտահայտություններ նա կատարել է 1953թ., 1956թ. [էջ 216] և այլն)[5]:

Պատմագիտության մեջ ընդունված է «էյզենհաուերի դոկտրինան» այդ թվում՝ սրան նախորդած և հաջորդած մյուս հայեցակարգերը դիտել հիմնականում Խորհրդային Միության ու «համաշխարհային կոմունիզմի» սպառնալիքի դեմ ուղղված ծրագիր՝ ելնելով հիմնականում նրանց փաստաթղթային բովանդակությունից: Սակայն հետպատերազմյան ժամանակաշրջանից ամերիկյան կառավարության կողմից արտասանվող «աշխարհը կառավարելու», «Ամերիկայի հատուկ առաքելության» մասին արտահայտությունները և արտաքին քաղաքականության մեջ ԱՄՆ-ի դրսևորումները գալիս են ապացուցելու, որ աշխարհի կենսամիջոցների համար պայքարը մղվում էր նաև կապիտալիստական աշխարհի ներսում՝ «նուրբ կամ կոշտ դիվանագիտության» սկզբունքով. ուր առաջատար դերը պատկանում էր Միացյալ Նահանգներին: Իսկ ԽՍՀՄ-ի դեմ «պայքարը» եղել է նաև կապիտալիստական աշխարհի ներսում պայքարը քողարկելու միջոց: Պատահական չէր, որ «էյզենհաուերի դոկտրինան» հրապարակվեց այն ժամանակ, երբ հին գաղութատիրական համակարգի փլուզման գործընթացը մտել էր «վերջնական» վճռորոշ փուլ: Խորհրդային հետազոտող Ռ. Ն. Անդրեասյանի կարծիքով «էյզենհաուերի դոկտրինայի» նպատակը Մերձավոր ու Միջին Արևելքում ամերիկյան նավթային-մենաշնորհի պաշտպանումն էր, իսկ հետագայում նաև բրիտանական կապիտալի դուրս մղումը [17]: Մեր կարծիքով սա միայն հարցի մեկ կողմն է, քանի որ նրա հետապնդած գլխավոր նպատակներից մեկը կապիտալիստական աշխարհը ապահովող գլխավոր էներգետիկ պաշարների վրա մենաշնորհային իշխանություն հաստատելը և եվրոպական դաշնակից պետություններին իրենից կախվածության տակ գցելն ու ամերիկյան դոլարի միջազգային շրջանառության ապահովումն էր: Այն ապահովելու էր ԱՄՆ-ի ռազմաքաղաքական գերիշխանությունը տնտեսական լծակներով:

---

[5] Ավելորդ չենք համարում նշել, որ Դ. էյզենհաուերը առաջինն էր ամերիկյան այն ղեկավարներից, որը հասկացավ, որ եկել է ԱՄՆ-ի կողմից «աշխարհը կառավարելու» մասին ավելի քիչ խոսելու ժամանակը, քանի որ միջազգային գործերում «հումանիտարհային գերիշխանության» մշտական հիշատակությունը կարող է լուրջ դժվարություն պատճառել Միացյալ Նահանգներին (նույն տեղում):

Փաստերն ու ուսումնասիրությունները ցույց են տալիս «Մարշալի պլանի» և «էյզենհաուերի դոկտրինայի» սկզբունքային պատճառահետևանքային կապի մասին, որտեղ վերջինս սկզբունքորեն հանդիսանում է նաև «Մարշալի պլանի» օրգանական շարունակությունն ու հետևանքը: Եթե «Մարշալի պլանը» հիմնական նպատակ էր հետապնդում վերականգնել ավերված Արևմտյան Եվրոպայի տնտեսությունը, իշխող դիրք գրավել կապիտալիստական երկրների շարքում, ապահովել իր տնտեսական և ռազմա-քաղաքական ազդեցությունն ու առաջնությունը Եվրոպայում և այն դարձնել ԽՍՀՄ-ի դեմ պայքարի «զսպման» և անվտանգության գոտի, ապա էյզենհաուերի դոկտրինան կոչված էր իրագործելու գրեթե նույն քաղաքականությունը Մերձավոր Արևելքում: «Մարշալի պլանն» ապահովեց ԱՄՆ-ը տնտեսական և քաղաքական ներթափանցումը Արևմտյան Եվրոպա և ճանապարհ հարթեց Եվրոպական տերություններից կախում ունեցող, բայց արդեն փլուզվող նախկին գաղութային համակարգ, իսկ «էյզենհաուերի դոկտրինան» «յուրովի» զարգացրեց «Մարշալի պլանը» Մերձավոր Արևելքում ստեղծված նոր պայմաններին համապատասխան ճանապարհ հարթելով նաև տարածաշրջանի նավթային պաշարները[6]: «Մարշալի պլանի» և «էյզենհաուերի դոկտրինայի» փոխկապակցված գործողության արդյունքում ԱՄՆ-ը պայմաններ ստեղծեց Եվրասիական մայրցամաքի զգալի մասում գերիշխող դիրք գրավելու համար, ինչի համար պայքարը շարունակվում է մինչ այժմ: Ինչպես ճիշտ նկատել է Զ. Բժեզինսկին, «Եվրասիան հանդիսանում է աշխարհի կենտրոնը և նա, ով վերահսկում է Եվրասիան, վերահսկում է ամբողջ աշխարհը» [18, էջ 11-12]:

Աղբյուրներ և գրականություն

1. Տես Սերգեև Ֆ. Ա., Եթե դիմակը պատռվի. ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչությունը ինչպես որ կա (ռուս. թարգ. Կ. Դալաչյան), Ե., 1985, էջ 87-132: Далтес А., Искусство разведки, М.: Международные отношения, 1992.
2. Տես Յովհաննիսյան Ն., Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958), Ե., 1968: Նույն հեղինակի Արաբական երկրների պատմություն, հ. III, Ե., 2006, էջ 610-627: Թյուրունջյան Պ., Լիբանանի ժողովրդի ազատագրական պայքարը և հայ համայնքը (1920-1990), Ե., 1992, էջ 117-141:
3. Տես Յովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Ե., 2006, էջ 270-273: Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., 2003, էջ 180-

[6] Հետաքրքիր է, որ Իսրայելի պետության ստեղծման (1948թ.) հարցում ԱՄՆ-ի կատավարությանը ունցել է հակասական մոտեցում: Եթե նախագահ Հ. Տրումենը կողմ էր նրա ստեղծմանը, ապա այնպիսի պետական գործիչներ ինչպիսիիք էին Զ. Մարշալը և Ա. Դալլեսը դեմ էին, գտնելով որ արաբական նավթը ԱՄՆ-ի համար առավել կարևոր է հրեական պետության ստեղծման հարցից մտավախություն ունենալով նաև ապագայում նրա խորհրդայնացումից:

182. Медведко Л. И., К востоку и западу от Суеца, М., 1980., Амброз С., Эйзенхауэр. Солдат и президент (пер. с англ. Ю. А. Здоровова и А. А. Миронова), М., 1993.
4. American Foreign Policy: Current Documents, 1957. Wash., 1961.,
5. История внешней политики СССР 1945-1980 гг., т. 2.
6. Իվանով Ռ. Ֆ., Դուայտ Էյզենհաուեր (ռուս. թարգ. Ռ. Հովհաննիսյան), Ե., 1990:
7. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., 2003:
8. Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Ե., 1999:
9. Румянцев В. П., Нефтяной фактор в ближневосточной политике США В 1957–1959 гг.// Вестник Томского государственного университета. № 322, май 2009.
10. Բայբուրդյան Վ. Իրանի պատմություն. Ե., 2006:
11. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Ե.,2006:
12. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. IV, Ե., 2007:
13. Սերգեև Ֆ. Մ., Եթե դիմակը պատռվի. ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչությունը ինչպես որ կա (ռուս. թարգ. Կ. Դալաչյան), Ե., 1985:
14. Даллес А., Искусство разведки, М.: Международные отношения, 1992.
15. Как могут перекроить границы Ближнего Востока, http://ttolk.ru/?p=6186, История США - история военных баз, http://www.avanturist.org/forum/topic/1625, Кому выгодна дестабилизация в Персидском заливе, и как это может сказаться на мировой экономике?,http://www.1tv.ru/news/world/196421, База по технологии "Стелс", http://www.rg.ru/2011/06/16/gulf.html, Планы перекройки политической карты Ближнего Востока и Исламского мираhttp://topwar.ru/6331-plany-perekroyki-politicheskoy-karty-blizhnego-vostoka-i-islamskogo-mira.html, Новый Ближний Восток: США становятся лидером в нефте- и газодобыче. http://www.forbes.ru/sobytiya-column/rynki/81049-novyi-blizhnii-vostok
16 Правда, 13 январь 1957.
17. Андреасян Р.Н., Доктрина Эйзенхауэра и нефть Ближнего Востока, М., 1957.
18. Бжезинский З., Великая шахматная доска: Америка и его геостратегические императивы (пер. с англ. О. Ю. Уральской), М.: Международные отношения, 2005.

Eisenhower Doctrine as the continuation of the principles of Marshall Plan

After the end of the Second World War the USA put forward the plan of reconstruction of Europe which is known as the Marshall Plan as well. This plan was directed not only to the reconstruction of the economy of Eastern Europe. It was also a geopolitical plan thus to provide the financial and economical penetration to Western Europe. The Marshall Plan provided the success of the economical diplomacy in Europe. After the plan had been completed the American Government soon pot forward Eisenhower Doctrine which was to provide the economical, financial and military penetration into the territory of Near East. Thus Eisenhower Doctrine considered being the organic continuation of geopolitical aims of the Marshall Plan in order to open the way to the deposits of oil of Near East.